

ՄԻԶԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔ*

Աթենագորաս Սրբազան Պատրիարքի և
Ս. Էջմիածնի Սրբազնագույն Կաթողիկոս
Վազգեն Ա-ին միջեւ, այս վերջինին Օրթո-
դոքս Եկեղեցին և Հարգելի կեղորնին 8 հու-
լիս, շաբաթ օրվան պատմական այցելու-
թյան առթիվ Գոխսանակված խոսակցություն-
ները շատ կարևոր եղած են:

Այս առթիվ, կողմերը երկու Եկեղեցիներու
Պետերուն միջև գոյություն ունեցող բարե-
կամությունը, սերը և Հարգալից զգացում-
ները ի հայտ բերած և երկու Եկեղեցիներուն
որեւէ ատենվընն ավելի այսօրվան հա-
մար եղբայրության և միացման հրավեր մը
նշանակած են:

Այս պատմական այցելությամբ, մեր Ե-
կեղեցին ուրախությունը մեծ և անսահման
եղած է. և ասոր համար է, որ շատ Հար-
գարժան Կաթողիկոսին քաղաքին տված այ-
ցելությամբ երկու քույր Եկեղեցիներու ա-
պագայի հարաբերություններուն համար
շատ մեծ նշանակություն և կարևորություն
ունեցող գեղք մը ըլլալով դիմավորված է
որպես շատ տեղին և բարերաստիկ սկըզբ-
նավորություն մը:

Տեղույն հայ Եկեղեցին երեք դարեւ ի
վեր Էջմիածնի Կաթողիկոսին կողմէ ան-
ձամբ օրհնվելու պատեհությունը չէր ու-
նեցած. և թերևս ավելի երկար դարերեւ ի

* Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատ-
րիարքության «Ապոստոլս Անդրեա» պատունաթերթի
օգոստոսի համարի խմբագրականը թարգմանարար
Հաճույքով հրատարակում ենք, ուր խոսում է Ամենային Հայոց Վեհափառ Հայրապետի Ստամբուլում՝ Հու-
լիս ամսվա ընթացքում, Ստամբուլի Հունաց Տիեզե-
րական Պատրիարք Նորին Սրբություն Տ. Աթենագորա-
սին տված այցելության և երկու Եկեղեցիների հար-
գարժան Պետերի միջև տեղի ունեցած խոսակցու-
թյանց մասին:

Խմբագրականը տորագրել է միարոպություն Տ. երի-
սոսառմաս Կոնստանտինիդիսը — ԽՄԲ.:

վեր ալ երկու պատմական Եկեղեցիներու
Պետերուն միջև ուղղակի շփում մը տեղի չէր
ունեցած:

Երջանկահիշատակ Գարեգին Պատրիարք,
Հակառակ իր տարիքին, երկու Եկեղեցինե-
րու միացումի գաղափարականին անխոնջ
հետևող մը և աւտեղի երկու տարրերուն
մեր Հայրենիքին օրենքներուն երաշխավո-
րությանը տակ, կողք-կողքի և եղբայրաբար
ապրելու ախոյան մըն էր, կրնանք ըսել
նաև, թե իր վախճանումով ևս այս զաղա-
փարներուն ծառալություն մատուցանեց:
Իր մահացումովը մեր մեծ Եկեղեցին տրի-
բության մեջ ձգեց, սակայն Սրբազնագույն
Աթենագորաս Պատրիարք Վեհափառ Հայրա-
պետին ուղղակ ուղերձին մեջ խտացուցած
էր իր զգացումները հետևյալ բառերով:
«Երջանկահիշատակ մեր եղբոր վախճանու-
մին առթած տիրության պատճառով. Սրբա-
նագույն Կաթողիկոսին այստեղ տված այ-
ցելությամբ ստեղծված ուրախությունը նվա-
զած է»:

Հեռավոր անցյալին՝ սխալ հասկացողու-
թյուններ իրարմե հեռացնող մթնոլորտ մը
ստեղծեցին:

Սակայն քանի ժամանակները անցան,
սխալ հասկացողություններու հին ուժգնու-
թյունն ալ նվազիլ սկսավ: Թնականորեն
սրտերը չեն դադրած բարակիլ, երակներու
մեջ գտնվող եղբայրական արյունը՝ որ
պատմության մեջ քանից կարևոր հանդի-
պումներ ունեցած է՝ շրջան կընե և իր շըր-
ջաներով հույսերու շունչ կոտա և հոգինե-
րը մեկմեկու կմիացնե. սակայն ասկե զատ
կա երկու տարրերուն մոտիկությունը և ա-
վանդություններու և նպատակներու նույնու-
թյունը և կյանքի ու ապագայի նույն համ-
բան. բոլոր այս տվյալները երկու Եկեղեցի-
ներուն մեջ մեկտեղված ըլլալու տպագորու-
թյունը ավելիով կզգացնեն: Այնպես որ աս-
կէ թիւ առաջ Սրբազան Պատրիարք Աթենա-

գորասի և երջանկահիշատակ Գարեգին Պատրիարքի բարեկամությունը հաստատող և գնահատողներեն ըլլալով՝ մենք երբեք այս զգացումներուն օտար շգտնվեցանք, ինչպես նաև այսօր ալ երկու հարգարժան Եկեղեցիներու Պետերը իրացու հետ եղայրական համբույրներեն օտարություն մը չեն զգար: Անոնք Քրիստոսի երկու սիրելի աշակերտները ըլլալով՝ կարծես թե շատ երկար ժամանակներ ի վեր երկու մտերիմ ընկերներու նման են, ոչ թե իրարմե հեռու հոգեոր պետերու պես, այլ ճիշտ հակառակը՝ մեկզմեկու միացող երկու եղբոր պես կտեսնենք զանոնք:

Եջմիածնի շատ հարգարժան Կաթողիկոսին անհատականությունը ուժեղ է. նայածքը մաքուր, դեմքը անուշ, խորհրդածությունը անարատ և վճիռ, աստվածաբանական տեսությունները խորունկ, փոխադարձ հասկացողության մարմաջը լայն է: Եկեղեցիներուն միացումի մասին նր փափաքը աշքով տեսանելի զգացում մըն է, և Եկեղեցվո Պետը ըլլալու հանգամանքով, - պատմական պատահանատվության գիտակից է, այն Եկեղեցվույն, որու դարերու բերած պատվարեր հարգն ու պատիվը տարածուն է:

Հարգարժան Կաթողիկոսը երբ կխոսի, իր ակնարկը դեպի ապագան կսեռնե: Խոսվածները յավ մտիկ կընե և խոսքերուն տակ սքողվածները կզգա, գաղափարները կրացատրե և խոսակցին ինչպես իրեն հետևած ըլլալը սրտին ներփակ թրթուացումներուն և անձայն զգացումներուն ինչպես մոտեն եղյակ ըլլալուն կանդրադառնա, այն թըր-

թըրացման և անձայն զգացումներուն, որ Եկեղեցիներուն միացումը արտահայտող և միմիայն Եկեղեցիներուն միացման փափագը ունեցողներուն հատուկ է:

Սակայն այս բոլորին վրա՝ էջմիածնի Կաթողիկոսը Եկեղեցվույն պատվարեր և հարգարժան ներկայացուցիչն է, և Ան Եկեղեցին, մեր մեծ Եկեղեցին թի' կոփե, թի' կհարգե և թի' անոր մեծ կարևորություն կուտա և մտերմությամբ ընկերության և Լղայրության ձեռք կերկարե անոր. մանավանդ այսօր երբեք չի տարակուսիր անոր համար, որ ամեն ինչ մեղի այդ վախճանին կմուտեցնե:

Պատմական Հայ Եկեղեցին եղայր Եկեղեցի մըն է. մենք անոր այս աշքով կնայինք, անոր հետ խոսելու և հարաբերության մտնելու մեջ երբեք պիտի շտատամսինք և անոր և մեր, երկու Եկեղեցիներուն միացումին: Ասաւուծն ողորմությամբը փափագող ենք: Այսպիսով Արևելյան Քրիստոնյա Աշխարհը ուժ պիտի շահի և երկու Եկեղեցիները զիրար ամբողջացուցած պիտի ըլլան, քանի որ «միությունը զորություն է» ասացվածքը միշտ գոյություն ունի:

Այս սյունակով Եջմիածնի շատ հարգարժան Կաթողիկոսին հոս տված այցելությունը կողշունենք՝ ինչպես որ Ան Սրբազն Պատրիարք Աթենագորասի ըրած ուղերձին մեջ ըսակ, «Պատվարեր և մեծ Եկեղեցվուն հարզ ու պատիվին համար Տիրոջը հովանին անպական ըլլա», մենք ալ անոր և Հայ Սուլը Եկեղեցվույն ի պատիվ լավագույն մաղթանքներ կհայտնենք:

